<<Ոչ պաշտոնական հրատարակություն>>



*«Վավերացնում եմ»*
Հայաստանի Հանրապետության
Նախագահի Ռ. Քոչարյան
*28 դեկտեմբերի 2006 թ.*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 դեկտեմբերի 2006 թվականի N 1838-Ն

## 51 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ՈՒ ՍՆՆԴԱՅԻՆ ՀԱՎԵԼՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԵՐԵՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱԿՆՇՄԱՆ ՁԵՎԵՐԻՆ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Սպառողների իրավունքների պաշտպանության մասին»[1] Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին կետի և «Սննդամթերքի անվտանգության մասին»[2] Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթների կիրարկումն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

Հաստատել Հայաստանի Հանրապետություն ներմուծվող սննդամթերքի ու սննդային հավելումների վերաբերյալ հայերեն տեղեկատվության մակնշման ձևերին և բովանդակությանը ներկայացվող պահանջները՝ համաձայն հավելվածի:

**Հայաստանի Հանրապետության վարչապետ** **Ա. Մարգարյան**

2006 թ. դեկտեմբերի 23
Երևան

---
1 ՀՀՊՏ 2001 N 25 (157), 02.08.01
2 ՀՀՊՏ 1999 N 32 (98), 31.12.99

Հավելված
ՀՀ կառավարության 2006 թվականի
դեկտեմբերի 21-ի N 1838-Ն որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ՈՒ ՍՆՆԴԱՅԻՆ ՀԱՎԵԼՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԵՐԵՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱԿՆՇՄԱՆ ՁԵՎԵՐԻՆ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

## I. ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏԸ

1. Սույն պահանջներով սահմանվում են Հայաստանի Հանրապետություն ներմուծվող սննդամթերքի ու սննդային հավելումների վերաբերյալ հայերեն տեղեկատվության մակնշման ձևերին և բովանդակությանը ներկայացվող պահանջները:

2. Սույն պահանջները չեն տարածվում Հայաստանի Հանրապետության տարածքում պետական մարմինների նախաձեռնությամբ գործող միջազգային տոնավաճառների և ցուցահանդեսների շրջանակներում Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած նմուշային քանակներով Հայաստանի Հանրապետություն ներմուծվող, ինչպես նաև ազատ տնտեսական գոտիներում իրացման ենթակա և մարդասիրական օգնության նպատակով Հայաստանի Հանրապետություն ներմուծված սննդամթերքի վրա:

## II. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3. Սույն պահանջներում կիրառված են հետևյալ հասկացությունները՝

***սպառողական տարա***՝ տարա, որը հանձնվում է սպառողին՝ սննդամթերքի հետ միասին.

***մակնշվածք***՝ սննդամթերքի սպառողական տարայի (փաթեթվածքի), պիտակի, լրացուցիչ պիտակի, մանեկապիտակի, թերթ-ներդրակի վրա նշված տեքստ, պայմանական նշաններ և պատկերներ.

***խմբային տարա***՝ տարա, որը նախատեսված է որոշակի քանակությամբ արտադրանքի միավորի համար.

***անհատական տարա***՝ տարա, որը նախատեսված է մեկ միավոր արտադրանքի համար.

***պիտակ***՝ տրված ձևով, չափերով և նյութերից պատրաստված արտադրատեսակ՝ նախատեսված մակնշվածքը նշելու համար, որն ամրացված կամ կցված է փաթեթվածքին կամ արտադրանքին կամ ներդրված է փաթեթավորման միավորում.

***մանեկապիտակ***՝ ոչ մեծ չափերի, տարբեր ձևերի շշերի բկամասում սոսնձված պիտակ.

***թերթ-ներդրակ***՝ սպառողական տարայում դրվող պիտակ, որի վրա նշված է տեղեկատվություն սպառողի համար:

## III. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

4. Հայաստանի Հանրապետություն ներմուծվող սննդամթերքի ու սննդային հավելումների վերաբերյալ հայերեն տեղեկատվություն սպառողներին պետք է ներկայացվի անմիջապես սննդամթերքի սպառողական տարայի, պիտակի, լրացուցիչ պիտակի, մանեկապիտակի կամ թերթ-ներդրակի վրա՝ սննդամթերքի առանձին տեսակների համար՝ արտադրողի, մատակարարի կամ նրա լիազոր ներկայացուցչի կողմից ընդունված մակնշման եղանակով:

Սննդամթերքի ու սննդային հավելումների վերաբերյալ հայերեն տեղեկատվության համապատասխանությունը սննդամթերքի ու սննդային հավելումների մակնշվածքի

բնագրին պետք է ապահովի դրանք արտադրողը, մատակարարը կամ նրա լիազորած ներկայացուցիչը:

5. Սննդամթերքի վերաբերյալ հայերեն հիմնական տեղեկատվությունը պետք է ներառի՝

ա) սննդամթերքի անվանումը, որը մակնշում են տարբերիչ տառատեսակով՝ ցանկացած ֆոնի վրա:

Սննդամթերքի տարբերակիչ հատկությունների և հատուկ մշակումների (օրինակ, «խտացրած», «չորացրած», «աղացած», «ապխտած», «պաստերացված», «գենետիկորեն ձևափոխված» և այլն) մասին տեղեկատվությունը պետք է տրվի հայերեն անվանմամբ:

Մանկական սննդամթերքի հայերեն մակնշվածքում անվանման հետ միասին պետք է ներառված լինի տեղեկատվություն դրա մանկական սնունդ լինելու մասին.

բ) տվյալներ արտադրողի մասին, ֆիրմային անվանումը և գտնվելու կամ բնակության վայրը.

գ) սննդամթերքի հիմնական բաղադրիչների ցանկը:

Սննդամթերքի հիմնական բաղադրիչների հայերեն ցանկը տրվում է այն սննդամթերքների համար, որոնց վերաբերյալ սույն պահանջների V բաժնի 1-ին և 2-րդ աղյուսակների «Այլ հիմնական տեղեկատվություն» սյունակում նախատեսված է բաղադրության մասին նշման անհրաժեշտությունը: Նշված ցանկը պետք է ունենա «Բաղադրությունը» վերնագիրը:

Սննդամթերքի բաղադրության վերաբերյալ հայերեն տեղեկատվությունը պետք է ներառի՝

տեղեկատվություն սննդամթերքի պատրաստման ժամանակ օգտագործված հիմնական բաղադրիչների պարունակության մասին,

սննդային հավելումի անվանումը և սննդային հավելումի դասիչը (օրինակ, նատրիումի բենզոատ E 211), իսկ դասիչի բացակայության դեպքում՝ նկարագրությունը, որը բավարար է նման այլ հավելումներից այն տարբերելու համար,

տեղեկատվություն գենետիկորեն ձևափոխված բաղադրիչի մասին (եթե սննդամթերքում այդպիսիք կան).

դ) առանձնակի հանձնարարականներ դրանց օգտագործման վերաբերյալ (եթե այդպիսիք կան).

ե) արտադրության տարեթիվը, ամիսը, օրը՝ մինչև 3 ամիս պիտանիության ժամկետով, ամիսը, տարեթիվը՝ 3 ամսվանից ավելի պիտանիության ժամկետով.

զ) զտաքաշը կամ ծավալը.

է) սույն պահանջների V բաժնում նախատեսված՝ արտաքին տնտեսական գործունեության արտադրանքի անվանացանկի (ԱՏԳ ԱԱ) ծածկագրերին համապատասխան՝ ըստ սննդամթերքի խմբերի տրված մակնշման վերաբերյալ այլ հիմնական տեղեկատվությունը:

6. Սննդային հավելումների վերաբերյալ հայերեն տեղեկատվությունը պետք է ներառի՝

ա) սննդային հավելումի անվանումը և սննդային հավելումի դասիչը, իսկ դասիչի բացակայության դեպքում՝ նկարագրությունը, որը բավարար է նման այլ հավելումներից այն տարբերելու համար.

բ) տվյալներ արտադրողի մասին (ֆիրմայի անվանումը և գտնվելու կամ բնակության վայրը).

գ) զտաքաշը.

դ) պատրաստման եղանակը կամ օգտագործման վերաբերյալ ցուցումներ (առկայության դեպքում).

ե) նշանակությունը և օգտագործման պայմանները՝ կենսաբանորեն ակտիվ հավելումների համար.

զ) հակացուցումներ հիվանդությունների առանձին տեսակների դեպքում կենսաբանորեն ակտիվ հավելումների, սննդային հավելումների օգտագործման վերաբերյալ, որոնք նախատեսված են Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի կողմից հաստատված գերատեսչական նորմատիվ իրավական ակտերով.

է) արտադրման և փաթեթավորման տարեթիվը, ամիսը, օրը.

ը) պահման պայմանները.

թ) պիտանիության ժամկետը:

## IV. ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ՈՒ ՍՆՆԴԱՅԻՆ ՀԱՎԵԼՈՒՄՆԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԶԵՏԵՂՈՒՄԸ

7. Սննդամթերքի ու սննդային հավելումների վերաբերյալ հայերեն տեղեկատվությունը զետեղվում է անմիջապես սպառողական տարայի յուրաքանչյուր միավորի վրա առանձին ձևավորված պիտակով կամ առանց դրա, կարդալու համար հարմար տեղում:

8. Այն փաթեթվածքի կամ տարայի վրա, որոնց ամենամեծ մակերեսը չի գերազանցում 10 քառ. սմ-ը, թույլատրվում է հայերեն տեղեկատվության տեքստը զետեղել խմբային տարայի յուրաքանչյուր միավորին կցվող թերթ-ներդրակի կամ սպառողական տարայի, ինչպես նաև հավաքածուներով վաճառվող սննդամթերքի խմբային սպառողական տարայի յուրաքանչյուր միավորի վրա, իսկ կշռածրարված մանկական սննդամթերքի վերաբերյալ հայերեն տեղեկատվությունը պետք է զետեղվի անհատական սպառողական տարայի յուրաքանչյուր միավորին կցվող թերթ-ներդրակի վրա:

## V. ԱՅԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

9. Արտաքին տնտեսական գործունեության արտադրանքի անվանացանկի ծածկագրերին համապատասխան՝ ըստ սննդամթերքի ու սննդային հավելումների խմբերի մակնշման վերաբերյալ այլ հիմնական տեղեկատվությունը ներկայացված է 1-ին աղյուսակում, իսկ մանկական սննդամթերքինը՝ 2-րդ աղյուսակում:

**Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար** **Մ. Թոփուզյան**

Աղյուսակ 1

| Ծածկագիրն ըստ ԱՏԳ ԱԱ դասակարգչի | Ապրանքի անվանումը | Այլ հիմնական տեղեկատվությունը |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| 0202 | Խոշոր եղջերավոր անասունների միս՝ սառեցրած | |
| 0202 10 000 | - մսեղիք և կիսամսեղիք | |
| 0202 20 | - ոսկրահան չարված այլ հատվածներ | |
| 0202 30 | - ոսկրահան արված | |
| | Խոզի միս՝ սառեցրած | |
| 0203 21 | - մսեղիք և կիսամսեղիք | |
| 0203 22 | - ազդրեր և թիակներ (առջևի ազդրեր) և դրանց հատվածները, ոսկրահան չարված | Պահման պայմանները |
| | - խոզի միս՝ այլ, բացի մսեղիքից և կիսամսեղիքից | Պիտանիության ժամկետը |
| 0203 29 | այլ | |
| 0204 30 000 | Գառան մսեղիք կամ կիսամսեղիք՝ սառեցրած | |
| 0204 41 000 | Ոչխարի միս սառեցրած՝ մսեղիք և կիսամսեղիք | |
| 0204 42 | Ոչխարի միս սառեցրած՝ ոսկրահան չարված | |
| 0204 43 | Ոչխարի միս սառեցրած՝ ոսկրահան արված | |
| 0206 21 000 | Խոշոր եղջերավոր անասունի լեզու սառեցրած | |
| 0206 22 000 | Խոշոր եղջերավոր անասունի լյարդ սառեցրած | |
| 0206 41 000 | Խոզի լյարդ սառեցրած | |

| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| 0207 12 | - Ընտանի հավի միս՝ չմասնատված, սառեցրած | Մշակման եղանակը (փորոտիքը հանած, փորոտիքը կիսահանված կամ փորոտիքի և վզի լրակազմով)<br>Պահման պայմանները<br>Պիտանիության ժամկետը |
| 0207 14 | - ընտանի հավի՝ մսեղիքի մասեր և սննդային ենթամթերք՝ սառեցրած | Պահման պայմանները<br>Պիտանիության ժամկետը |
| 0207 25 | - հնդկահավի միս՝ չմասնատված, սառեցրած | Մշակման եղանակը (փորոտիքը հանած, փորոտիքը կիսահանված կամ փորոտիքի և վզի լրակազմով)<br>Պահման պայմանները<br>Պիտանիության ժամկետը |
| 0207 27 | - հնդկահավի՝ մսեղիքի մասեր և սննդային ենթամթերք՝ սառեցրած | Պահման պայմանները<br>Պիտանիության ժամկետը |
| 0207 33 | - բադի, սագի և խայտահավի միս՝ չմասնատված, սառեցրած | Մշակման եղանակը (փորոտիքը հանած, փորոտիքը կիսահանված կամ փորոտիքի և վզի լրակազմով)<br>Պահման պայմանները<br>Պիտանիության ժամկետը |
| 0207 36 | - բադի, սագի և խայտահավի սառեցրած՝ մսեղիքի մասեր | Պահման պայմանները<br>Պիտանիության ժամկետը |

| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| 0208 10 190 | Ճագարի կամ ճագարատակի միս և մսից սննդային ենթամթերք՝ սառեցրած | Պահման պայմանները<br>Պիտանիության ժամկետը |
| 0208 40 | Կետի, դելֆինի և ծովային խոզի միս և մսից սննդային ենթամթերք՝ սառեցրած | |
| 0208 90 | Մսեղեն և մսից սննդային ենթամթերք՝ սառեցրած այլ | |
| 0209 00 | Խոզի ճարպ՝ առանձնացրած անյուղ մսից, և ընտանի թռչունների ճարպ չհալեցրած կամ այլ եղանակով չառանձնացրած, սառեցրած, աղի, աղաջրի մեջ դրած, չորացրած կամ ապխտած | Օգտագործման համար նախապատրաստման եղանակը (օգտագործումից առաջ հատուկ մշակում պահանջելու դեպքում)<br>Մշակման եղանակը՝ աղի, աղաջրի մեջ դրած, չորացրած կամ ապխտած<br>Աղաջրի մեջ դրածի դեպքում՝ խոզի ճարպի զանգվածն առանց աղաջրի<br>Պահման պայմանները<br>Պիտանիության ժամկետը |
| 0210 | Միս և մսից սննդային ենթամթերք՝ աղի, աղաջրի մեջ դրած, չորացրած կամ ապխտած | Օգտագործման համար նախապատրաստման եղանակը (օգտագործումից առաջ հատուկ մշակում պահանջելու դեպքում)<br>Մշակման եղանակը՝ աղի, աղաջրի մեջ դրած, չորացրած կամ ապխտած<br>Աղաջրի մեջ դրածի դեպքում՝ մսի և մսից սննդային ենթամթերքի զանգվածն առանց աղաջրի<br>Պահման պայմանները<br>Պիտանիության ժամկետը |

| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| | Սննդայուր մսի կամ մսից սննդային ենթամթերքից | Օգտագործման համար նախապատրաստման եղանակը (օգտագործումից առաջ հատուկ մշակում պահանջելու դեպքում)<br>Պահման պայմանները<br>Պիտանիության ժամկետը |
| 0303 | Ձուկ սառեցված, բացառությամբ ձկան սուկիից և 0304 ապրանքային դիրքի ձկների մսից | Մասնատման եղանակը (գլխատված կամ փորոտիքը հանված)<br>Պահման պայմանները<br>Պիտանիության ժամկետը |
| 0304 21 000<br>0304 22 000<br>0304 29<br>0304 91 000<br>0304 92 000<br>0304 99 | Ձկան սուկի՝ սառեցված<br><br><br>Ձկնամիս՝ սառեցված, այլ | Պահման պայմանները<br>Պիտանիության ժամկետը |
| 0305 | Ձկներ՝ չորացրած, աղի կամ աղաջրի մեջ դրված | Մշակման տեսակը (աղը դրած. աղաջրի մեջ դրված, ապխտած կամ չորացրած) |
| | Ձկներ տաք կամ սառը ծխով ապխտած | Աղաջրի մեջ դրածի դեպքում՝ ձկան զանգվածն առանց աղաջրի<br>Պահման պայմանները<br>Պիտանիության ժամկետը |
| | Ձկնալյուր՝ խոշոր և մանր աղացվածքի և հատիկներ՝ պիտանի սննդի մեջ օգտագործելու համար | Պատրաստման եղանակը<br>Պահման պայմանները<br>Պիտանիության ժամկետը |

| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| 0306 11<br>0306 12<br>0306 13 | Խեցեմորթներ, մաննատված կամ չմասնատված, շոգեխաշած կամ եռացող ջրի մեջ խաշած<br>- սառեցրած | Պահման պայմանները<br>Պիտանիության ժամկետը |
| 0306 14 | - չորացրած, աղի կամ աղաջրի մեջ դրած | Աղաջրի մեջ դրածի դեպքում խեցեմորթների զանգվածն առանց աղաջրի<br>Պահման պայմանները<br>Պիտանիության ժամկետը |
| 0306 19<br>0306 29 | Խեցգետնային այլ, ներառյալ ալյուր՝ խոշոր և մանր աղացվածքի և հատիկներ խեցեմորթներից՝ պիտանի սննդի մեջ օգտագործելու համար | Պատրաստման եղանակը<br>Պահման պայմանները<br>Պիտանիության ժամկետը |
| 0307 | Կակղամորթներ, մասնատված կամ չմասնատված<br>- սառեցրած | Պահման պայմանները<br>Պիտանիության ժամկետը |
| | - չորացրած, աղի կամ աղաջրի մեջ դրած | Աղաջրի մեջ դրածի դեպքում կակղամորթների զանգվածն առանց աղաջրի<br>Պահման պայմանները<br>Պիտանիության ժամկետը |

| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| | Ջրային այլ անողնաշարավորներ խեցեմորթներից և կակղամորթներից տարբեր<br>- սառեցրած | Պահման պայմանները<br>Պիտանիության ժամկետը |
| | - չորացրած, աղի կամ աղաջրի մեջ դրված | Աղաջրի մեջ դրածի դեպքում խեցեմորթներից և կակղամորթներից ջրային այլ անողնաշարավորների զանգվածն առանց աղաջրի<br>Պահման պայմանները<br>Պիտանիության ժամկետը |
| | Ալյուր՝ մանր և խոշոր աղացվածքի և հատիկներ ջրային այլ անողնաշարավորներից՝ պիտանի սննդի մեջ օգտագործելու համար | Պատրաստման եղանակը<br>Պահման պայմանները<br>Պիտանիության ժամկետը |
| 0401 | Կաթ և կաթնասեր, չխտացրած և շաքար կամ այլ քաղցրացնող նյութեր չավելացրած | Յուղի (կաթնայուղի) զանգվածային մասը, պահման պայմանները<br>Պիտանիության ժամկետը |
| 0402, բացառությամբ 0402 29 110 | Կաթ և կաթնասեր (այդ թվում՝ կաթի փոշի), խտացրած և շաքար կամ այլ քաղցրացնող նյութեր ավելացրած | Յուղի (կաթնայուղի) զանգվածային մասը<br>Շաքարի զանգվածային մասը<br>Պատրաստման եղանակը<br>Պահման պայմանները<br>Պիտանիության ժամկետը |
| 0403 | Թան, կտրված կաթ և կաթնասեր, յոգուրտ, մածուն, կեֆիր և խմորման ենթարկված կամ թթվեցրած կաթ ու կաթնասեր, խտացրած կամ չխտացրած, շաքար կամ այլ քաղցրացնող նյութեր ավելացրած կամ չավելացրած, համաբուրավետիչ հավելումներով կամ առանց դրանց, մրգեր, ընկույզներ կամ կակաո ավելացրած կամ չավելացրած | Կաթնայուղի (յուղի) զանգվածային մասը<br>Բաղադրությունը<br>Սննդային հավելումները, բուրավետիչները, կենսաբանորեն ակտիվ հավելանյութերը՝ պատրաստված կաթից, կաթնային բաղադրամասերից կամ բարդ բաղադրությամբ հումքից՝ պատրաստի մթերքի մեջ (առկայության դեպքում) |

| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| | | Բիֆիդոբակտերիաների (առկայության դեպքում),<br>պրոբիոտիկ կուլտուրաների (առկայության դեպքում), խմորիչների (առկայության դեպքում),<br>կաթնաթթվային<br>բակտերիաների (առկայության դեպքում)<br>պարունակությունը<br>Պահման պայմանները<br>Պիտանիության ժամկետը |
| 0404 10 | Կաթնային շիճուկ և ձևափոխված կաթնային շիճուկ, խտացրած կամ չխտացրած, շաքար կամ այլ քաղցրացնող նյութեր ավելացրած կամ չավելացրած | Կաթնայուղի զանգվածային մասը<br>Բաղադրությունը՝ շաքարի և սպիտակուցների զանգվածային մասերը (առկայության դեպքում)<br>Պահման պայմանները<br>Պիտանիության ժամկետը |
| 0404 90 | Մթերքներ կաթի բնական բաղադրիչներից, շաքար կամ այլ քաղցրացնող նյութեր ավելացրած կամ չավելացրած, այլ տեղում չնշված | Կաթնայուղի զանգվածային մասը<br>Բաղադրությունը<br>Պահման պայմանները<br>Պիտանիության ժամկետը |
| 0405 | Կարագ և կաթից պատրաստված այլ ճարպեր և յուղեր. կաթնային մածուկներ | Կաթնայուղի զանգվածային մասը<br>Բաղադրությունը՝ մեկից ավելի բաղադրամասերի առկայության դեպքում<br>Պահման պայմանները<br>Պիտանիության ժամկետը |

| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| 0406 | Պանիրներ և կաթնաշոռ | Յուղի զանգվածային մասը<br>Օգտագործված բակտերիական պատրաստուկի կամ խմորիչի անվանումը և կաթ մակարդող պատրաստուկի անվանումը<br>Պահման պայմանները<br>Պիտանիության ժամկետը |
| 0407 00 | **Թռչնի ձու, կճեպով, թարմ, պահածոյացված կամ եփած** | Կատեգորիան<br>Տեսակավորման թվականը<br>Սպառողական տարայում ձվերի քանակը<br>Պահման պայմանները<br>Պիտանիության ժամկետը |
| 0408 11<br>0408 91 | Թռչնի ձվի դեղնուց, չորացրած<br>Թռչնի ձու առանց կճեպի , չորացրած | Պահման պայմանները<br>Բաղադրությունը՝ մեկից ավելի բաղադրամասերի առկայության դեպքում<br>Պատրաստման եղանակը<br>Պիտանիության ժամկետը |
| 0409 00 000 | Բնական մեղր | Ծագման վայրը<br>Խոնավությունը (բնական)<br>Հավաքման տարին |
| 0710<br>0712<br><br>0713<br><br>0714 | Բանջարեղեն (հում կամ ջրում եփած կամ շոգեխաշած)՝ սառեցրած<br>Բանջարեղեն չորացրած, ամբողջական, կտրտած կտորներով, բլիթներով, մանրացրած կամ փոշու ձևով, բայց հետագա մշակման չենթարկված<br>Լոբազգի բանջարեղեն՝ չորացրած, կեղևած, սերմնակեղևը հանած կամ չհանած, կոտրած կամ չկոտրած<br>Մանիոկա, մարանտա վաստինդիան, սալեպ, գետնախնձոր (տոպինամբուր), | Ցուցումներ մթերքի մշակման հատուկ եղանակների վերաբերյալ (առկայության դեպքում)<br>Պիտանիության ժամկետը |

| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| | քաղցր կարտոֆիլ (բատատ) և համանման այլ, արմատապտուղներ ու պալարապտուղներ օսլայի կամ ինուլինի բարձր պարունակությամբ՝ սառեցված կամ չորացրած, ամբողջական կամ կտրատած կամ հատիկների տեսքով. սագոյան արմավենու միջուկ | Պահման պայմանները (առկայության դեպքում)<br>Պիտանիության ժամկետը |
| 0801 | Ընկույզներ կոկոսյան, բրազիլյան և կեշյու՝ թարմ կամ չորացրած, կճեպը մաքրած կամ չմաքրած, կեղևով կամ առանց կեղևի | Պահման պայմանները<br>Պիտանիության ժամկետը՝ չորացրած ընկույզների |
| 0802 | Այլ ընկույզներ՝ թարմ կամ չորացրած, կճեպը մաքրած կամ չմաքրած, կեղևով կամ առանց կեղևի | |
| 0803 00 900 | Բանաններ, ներառյալ պլանտայններ՝ չորացրած | Տեղեկություններ մրգերի մշակման հատուկ եղանակների վերաբերյալ (առկայության դեպքում)<br>Պահման պայմանները (առկայության դեպքում)<br>Պիտանիության ժամկետը |
| 0804 20 900 | Թուզ՝ չորացրած | |
| 0805 10 800 | Նարինջ՝ չորացրած | |
| 0806 20 | Խաղող՝ չորացրած | |
| 0813 | Պտուղներ չորացրած՝ բացառությամբ 0801-0806 ապրանքային դիրքի պտուղներից. տվյալ խմբի ընկույզների կամ չորացրած պտուղների խառնուրդներ | |
| 0901 | Սուրճ՝ բոված կամ չբոված, կոֆեինով կամ առանց կոֆեինի, սուրճի թեփ և սուրճի հատիկների պատյան. սուրճի փոխարինիչներ՝ ցանկացած համամասնությամբ սուրճի պարունակությամբ | Կարգը (առկայության դեպքում)<br>Պատրաստման եղանակը (առկայության դեպքում)<br>Պահման պայմանները<br>Պիտանիության ժամկետը (բացի կանաչ սուրճից) |
| 0902 | Թեյ՝ համային և բուրավետացնող հավելումներով կամ առանց դրանց | Կարգը (առկայության դեպքում)<br>Բույրի անվանումը, երբ թեյի պատրաստման ժամանակ օգտագործված են բուրավետիչներ |
| 0903 00 000 | Մատե կամ պարագվայական թեյ | |

| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| | | Պատրաստման եղանակը կամ օգտագործման վերաբերյալ ցուցումներ (առկայության դեպքում)<br>Պահման պայմանները<br>Պիտանիության ժամկետը |
| 0904<br><br>0905 00 000<br>0906<br>0908<br>0910 | Պղպեղ (Piper) ցեղի պղպեղ. Կապսիկում (Capsicum) ցեղի կամ Պիմենտա (Pimenta) ցեղի պտուղ՝ չորացրած, մանրացրած կամ աղացած.<br>Վանիլ<br>Դարչին և դարչնածառի ծաղիկներ<br>Մշկընկույզ, մացիս և հիլ<br>Կոճապղպեղ, զաֆրան, տուրմերիկ (քրքում), ծորենի (թարց), դափնետերև, կարրի և այլ համեմունքներ | Կարգը (առկայության դեպքում)<br>Օգտագործման վերաբերյալ ցուցումները՝ բուրավետիչների համար (առկայության դեպքում)<br>Պահման պայմանները<br>Պիտանիության ժամկետը |
| 1006 | Բրինձ | Կարգը (առկայության դեպքում)<br>Պահման պայմանները<br>Պիտանիության ժամկետը |
| 1101 00<br><br>1102<br><br>1103 | Ալյուր ցորենի կամ ցորենա-աշորայի<br>Հացահատիկային այլ բույսերի ալյուր, բացառությամբ ցորենի կամ ցորենա-աշորայի ալյուրից<br>Ձավար, խոշոր աղացվածքի ալյուր և հացահատիկներ | Կարգը կամ համարը (առկայության դեպքում)<br>«ՎԻՏԱՄԻՆԱՑՎԱԾ» բառը (խոշոր տառատեսակով) հարստացման ցորենի բարձր և առաջին տեսակների վիտամինացված ալյուրի համար<br>Պահման պայմանները<br>Պիտանիության ժամկետը |
| 1104 | Հացահատիկ՝ այլ միջոցներով մշակված (օրինակ՝ կեղևահանված, տափակացրած, փաթիլացրած, ծեծած, մանրածավալի տեսքով կամ մանրացրած), բացառությամբ 1006 ապրանքային դիրքում նշված բրնձից. հացահատիկային բույսերի սաղմեր՝ ամբողջական, տափակացրած, փաթիլների տեսքով կամ աղացած | Պահման պայմանները<br>Պիտանիության ժամկետը (եգիպտացորենի, ցորենի, բրնձի և վարսակաձավարի փաթիլների համար) |

| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| 1105 | Այուր մանր և խոշոր աղացվածքի, փոշի, փաթիլներ, հատիկավորված կարտոֆիլից | Ցուցումներ օգտագործման վերաբերյալ (առկայության դեպքում)<br>Պահման պայմանները<br>Պիտանիության ժամկետը |
| 1106<br><br><br><br>1107 | Այուր մանր և խոշոր աղացվածքի և փոշի 0713 ապրանքային դիրքի լոբազգի չորացրած բանջարեղենից, 0714 ապրանքային դիրքի սագոյան արմավենու միջուկից, արմատապտուղներից կամ պալարապտուղներից կամ 08 խմբում դասակարգված մթերքներից<br>Ածիկ՝ բոված կամ չբոված | Կարգը (առկայության դեպքում)<br>Ցուցումներ օգտագործման վերաբերյալ (առկայության դեպքում)<br>Պահման պայմանները<br>Պիտանիության ժամկետը |
| 1108 | Օսլա, ինուլին | Կարգը (առկայության դեպքում)<br>Պահման պայմանները<br>Պիտանիության ժամկետը |
| 1109 00 000 | Ցորենի սնձան (սոսնձանյութ), չոր կամ թաց | Կարգը (առկայության դեպքում)<br>Ցուցումներ օգտագործման վերաբերյալ, պահման պայմանները<br>Պիտանիության ժամկետը |
| 1202 | Գետնանուշ՝ չբոված կամ որևէ այլ եղանակով չպատրաստված, կեղևահանված կամ կեղևով, մանրացված կամ չմանրացված | Պահման պայմանները<br>Պիտանիության ժամկետը |
| 1206 00 | Արևածաղկի սերմ, մանրացված կամ չմանրացված | Կարգը (առկայության դեպքում)<br>Բերքի տարին<br>Պահման պայմանները<br>Պիտանիության ժամկետը |

| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| 1501 00 | Խոզաճարպ (ներառյալ հալած խոզաճարպը) և ընտանի թռչնի ճարպ, բացառությամբ 0209 կամ 1503 ապրանքային դիրքերում նշված ճարպերից | Պիտանիության ժամկետը |
| 1502 00 | Խոշոր եղջերավոր անասունների, ոչխարների և այծերի ճարպ, բացառությամբ 1503 ապրանքային դիրքում նշված ճարպերից | |
| 1504 | Ճարպեր, յուղեր՝ չզտած կամ զտած և դրանց զտամասեր՝ ձկան կամ ծովային կաթնասունների՝ առանց փոփոխելու քիմիական բաղադրությունը | Բաղադրությունը (առկայության դեպքում)<br>Պիտանիության ժամկետը |
| 1506 00 000 | Կենդանական այլ ճարպեր ու յուղեր՝ չզտած կամ զտած և դրանց զտամասեր՝ առանց փոփոխելու քիմիական բաղադրությունը | |
| 1507, բացառությամբ՝<br>1507 10 100<br>1507 90 100 | Սոյայի յուղ՝ չզտած կամ զտած և դրա զտամասերը՝ առանց փոփոխելու քիմիական բաղադրությունը, բացառությամբ տեխնիկական և կամ արդյունաբերական օգտագործման | Կարգը (առկայության դեպքում)<br>Պիտանիության ժամկետը |
| 1508 բացառությամբ<br>1508 10 100<br>1508 90 100 | Գետնանուշի յուղ՝ չզտած կամ զտած և դրա զտամասերը՝ առանց փոփոխելու քիմիական բաղադրությունը, բացառությամբ տեխնիկական և կամ արդյունաբերական օգտագործման | |
| 1509 | Ձիթապտղի յուղ՝ չզտած կամ զտած և դրա զտամասերը՝ առանց փոփոխելու քիմիական բաղադրությունը | |
| 1510 00 | Այլ յուղեր՝ չզտած կամ զտած և դրանց զտամասերը, որոնք ստացվում են միայն ձիթապտուղներից կամ զեյթունից՝ առանց փոփոխելու քիմիական բաղադրությունը, ներառյալ այդ յուղերի և զտամասերի խառնուրդները 1509 ապրանքային դիրքում դասակարգված յուղերի կամ դրանց զտամասերի հետ | Բաղադրությունը (առկայության դեպքում)<br>Կարգը (առկայության դեպքում)<br>Պիտանիության ժամկետը |

| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| 1512, բացառությամբ<br>1512 11 100<br>1512 19 100<br>1512 21 100<br>1512 29 100 | Արևածաղկի, քրքումի կամ բամբակի յուղ՝ չզտած կամ զտած և դրանց զտամասերը՝ առանց փոփոխելու քիմիական բաղադրությունը՝ բացառությամբ տեխնիկական և կամ արդյունաբերական օգտագործման | |
| 1513, բացառությամբ<br>1513 11 100<br>1513 19 300<br>1513 21 100<br>1513 29 300 | Հնդկընկույզի (մինուկի), արմավամիջուկի կամ բաբասուի յուղ՝ չզտած կամ զտած և դրանց զտամասերը՝ առանց փոփոխելու քիմիական բաղադրությունը, բացառությամբ տեխնիկական և կամ արդյունաբերական օգտագործման | Կարգը (առկայության դեպքում)<br>Պիտանիության ժամկետը |
| 1514, բացառությամբ՝<br>1514 11 100<br>1514 19 100<br>1514 91 100<br>1514 99 100 | Հյածուկի, ռափսի կամ մանանեխի յուղ՝ չզտած կամ զտած և դրանց զտամասերը՝ առանց փոփոխելու քիմիական բաղադրությունը, բացառությամբ տեխնիկական և կամ արդյունաբերական օգտագործման | |

| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| 1515, բացառությամբ<br>1515 19 100<br>1515 21 100<br>1515 29 100<br>1515 30 100<br>1515 50 110<br>1515 50 910<br>1515 90 210<br>1515 90 310<br>1515 90 400<br>1515 90 600 | Այլ չցնդող բուսական ճարպեր և յուղեր (ներառյալ ժոժոբայի յուղը)՝ չզտված կամ զտված և դրանց զտամասերը՝ առանց փոփոխելու քիմիական բաղադրությունը, բացառությամբ տեխնիկական և կամ արդյունաբերական օգտագործման | Կարգը (առկայության դեպքում)<br>Պիտանիության ժամկետը |
| 1516, բացառությամբ<br>1516 20 950 | Կենդանական կամ բուսական ճարպեր և յուղեր՝ չզտված կամ զտված և դրանց զտամասերը՝ լրիվ կամ մասնակի ջրածնավորված (հիդրոգենացված), ընդերեսացված, վերաեթերացված կամ էլաիդինացված, չզտված կամ զտված, սակայն հետագա մշակման չենթարկված, բացառությամբ տեխնիկական և կամ արդյունաբերական օգտագործման | Յուղի զանգվածային մասը<br>Բաղադրությունը (առկայության դեպքում)<br>Պիտանիության ժամկետը |
| 1517 | Մարգարին. սննդի մեջ օգտագործելու համար պիտանի խառնուրդներ կամ պատրաստի մթերքներ՝ կենդանական կամ բուսական ճարպերից կամ յուղերից կամ տվյալ խմբի ճարպերի կամ յուղերի զտամասերից, բացառությամբ 1516 ապրանքային դիրքում նշված սննդի ճարպերից կամ յուղերից կամ դրանց զտամասերից | Կարգը (առկայության դեպքում)<br>Յուղի զանգվածային մասը, այդ թվում՝ կաթնայուղի զանգվածային մասը յուղային փուլի բաղադրության մեջ դրա 10%-ից ոչ պակաս առկայության դեպքում<br>Պահման պայմանները<br>Պիտանիության ժամկետը |

| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| 1601 00 | Երշիկներ և մսից, մսային ենթամթերքից կամ արյունից պատրաստված համանման մթերքներ. դրանց հիմքով պատրաստված պատրաստի սննդամթերքներ | Բաղադրությունը (առկայության դեպքում)<br>«Փաթեթավորված է վակուումով» (փաթեթավորում վակուումի առկայության դեպքում) բառերը<br>Պահման պայմանները<br>Պիտանիության ժամկետը |
| 1602, բացառությամբ 1502 10 001 | Մսից, մսային ենթամթերքից կամ արյունից պատրաստված այլ պատրաստի կամ պահածոյացված սննդամթերքներ | Օգտագործման համար նախապատրաստման եղանակը (օգտագործումից առաջ հատուկ մշակում պահանջող պահածոների համար)<br>Բաղադրությունը (առկայության դեպքում)<br>Պահման պայմանները<br>Պիտանիության ժամկետը |
| 1603 00 | Էքստրակտներ և հյութեր մսից, ձկից կամ խեցգետնայիններից, կակղամորթներից կամ ջրային այլ անողնաշարավորներից | Կարգը (առկայության դեպքում)<br>Բաղադրությունը (առկայության դեպքում)<br>Օգտագործման եղանակը (առկայության դեպքում)<br>Պահման պայմանները<br>Պիտանիության ժամկետը |
| 1604 | Պատրաստի կամ պահածոյացված ձուկ. թառափազգիների ձկնկիթ և խավիարի փոխարինիչներ՝ պատրաստված ձկների ձկնկիթներից | Կարգը (առկայության դեպքում)<br>Բաղադրությունը<br>Օգտագործման եղանակը (առկայության դեպքում)<br>Պահման պայմանները<br>Պիտանիության ժամկետը |
| 1605 | Պատրաստի կամ պահածոյացված խեցգետնայիններ, կակղամորթներ և ջրային այլ անողնաշարավորներ | |

| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| 1701 91 000 | - Շաքար եղեգնի կամ ճակնդեղի այլ՝ պինդ վիճակում բուրավետիչներով կամ ներկող հավելումներով | |
| 1701 99 | - Շաքար եղեգնի կամ ճակնդեղի՝ պինդ վիճակում այլ | |
| 1702 | Շաքարի այլ տեսակներ, ներառյալ՝ քիմիապես մաքուր կաթնաշաքարը, ածիկաշաքարը, խաղողաշաքարը և պտղաշաքարը, պինդ վիճակում. շաքարի թանձրահյութ առանց անուշաբույր և ներկող հավելումների. արհեստական մեղր՝ բնական մեղրի հետ խառնած կամ չխառնած. շաքարայրենի գավազացիչ | Պահման պայմանները |
| 1703 | Կերակրամաս՝ ստացված շաքարի լուծազատումից կամ զտումից | |
| 1704 | Շաքարից պատրաստված հրուշակեղեն (ներառյալ սպիտակ շոկոլադը)՝ կակաո չպարունակող | Բաղադրությունը (առկայության դեպքում)<br>Պահման պայմանները<br>Պիտանիության ժամկետը (բացի մարմելադի և պաստեղայինի արտադրատեսակների, ծամոնի համար) |
| 1801 00 000 | Հատիկավոր կակաո՝ ամբողջական կամ մանրացված, հում կամ բոված | Պահման պայմանները<br>Պիտանիության ժամկետը |
| 1803 | Կակաո մածուկ՝ յուղազերծած և չյուղազերծած | Մշակման եղանակը՝ յուղազերծված կամ չյուղազերծված<br>Ցուցումներ օգտագործման վերաբերյալ (առկայության դեպքում)<br>Պահման պայմանները<br>Պիտանիության ժամկետը |

| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| 1804 00 000 | Կակաո-յուղ, կակաո-ճարպ | Կարգը (առկայության դեպքում)<br>Ցուցումներ օգտագործման վերաբերյալ (առկայության դեպքում)<br>Պահման պայմանները<br>Պիտանիության ժամկետը |
| 1805 00 000 | Կակաո-փոշի՝ առանց շաքարի կամ այլ քաղցրացնող նյութերի | |
| 1806 | Շոկոլադ և կակաո պարունակող այլ պատրաստի սննդամթերքներ | Բաղադրությունը (առկայության դեպքում)<br>Պահման պայմանները<br>Պիտանիության ժամկետը |
| 1901<br>բացառությամբ<br>1901 10 000 | Ածիկային խտանյութ. այլ տեղում չնշված պատրաստի սննդամթերքներ՝ պատրաստված խոշոր կամ մանր աղացվածքի ալյուրից, ձավարից, օսլայից կամ ածիկային խտանյութից՝ կակաո չպարունակող կամ 40 %-ից պակաս զանգվածային մասով կակաո պարունակող (ամբողջովին յուղազերծված հիմքի վերահաշվարկով). 0401-0404 ապրանքային դիրքերում դասակարգված հումքից պատրաստված սննդամթերքներ. 5 %-ից պակաս զանգվածային մասով (ամբողջովին յուղազերծված հիմքի վերահաշվարկով) կակաո պարունակող կամ չպարունակող, այլ տեղում չնշված | Բաղադրությունը (առկայության դեպքում)<br>Ցուցումներ օգտագործման վերաբերյալ (առկայության դեպքում)<br>Պահման պայմանները<br>Պիտանիության ժամկետը |
| 1902 | Մակարոնային արտադրատեսակներ, ենթարկված կամ չենթարկված ջերմային մշակման, միջուկով (մսից կամ այլ մթերքներից) կամ առանց միջուկի, կամ այլ ձևով պատրաստված, ինչպիսիք են սպագետտին, մակարոնը, լապշան, եղջյուրիկները, խմորագնդիկները, ռավիոլին, կաննելոնին. կուսկուս՝ պատրաստված կամ ոչ պատրաստված սննդի մեջ օգտագործելու համար | Բաղադրությունը (առկայության դեպքում)<br>Ալյուրի խումբը և դասը (կարգը) (առկայության դեպքում)<br>Փաթեթավորման թվականը<br>Պատրաստման եղանակը<br>Պիտանիության ժամկետը |
| 1903 00 000 | Տապիոկա և դրա փոխարինիչները՝ պատրաստված օսլայից՝ փաթիլների, հատիկների, գնդիկների, մանրահատիկների կամ այլ համանման ձևերով | Պահման պայմանները<br>Պիտանիության ժամկետը |

| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| 1904 | Պատրաստի սննդամթերքներ՝ ստացված հացահատիկի հատիկների կամ հացահատիկային մթերքների (օրինակ. եգիպտացորենի ձողիկներ) փքեցնելու կամ բովելու միջոցով. հացահատիկի հատիկներ (բացառությամբ եգիպտացորենի հատիկներից) գրանուլների կամ փաթիլների տեսքով կամ մշակված այլ եղանակով, (բացառությամբ մանր կամ խոշոր աղացվածքի ձավարեղենի ալյուրից), նախապես եփած կամ պատրաստված այլ ձևով, այլ տեղում չնշված | Վիտամինների բաղադրությունը (անկայունության դեպքում)<br>Պահման պայմանները<br>Պիտանիության ժամկետը |
| 1905 | Հաց, ալրային հրուշակեղեն, թխվածքներ, բիսքիթներ և այլ հացաբուլկեղեն ու կակաո պարունակող կամ չպարունակող հրուշակեղեն. վաֆլիի չերտեր, վաֆլիի բլիթաթերթեր ծրարելու համար, բրնձաթուղթ և համանման մթերքներ | Բաղադրությունը<br>Պատրաստման ժամը և թվականը (բացի և հացաբուլկեղենի համար)<br>Իրացման ժամկետը (բացի և հացաբուլկեղենի համար)<br>Պիտանիության ժամկետը՝ հրուշակեղենի, թխվածքների, բիսքիթների և այլ հացաբուլկեղենի ու կակաո պարունակողների համար<br>Պահման պայմանները |
| 2001 | Վարունգներ, պտուղներ (մրգեր), ընկույզներ և բույսերի այլ ուտելի մասեր՝ պատրաստված կամ պահածոյացված քացախի կամ քացախաթթվի ավելացմամբ | Հիմնական մթերքի զանգվածը (թթվաջրում, աղաջրում, լցնովքում պատրաստված մթերքի համար)<br>Մրգային կամ բանջարեղենային մասի զանգվածային մասը<br>Պահման պայմանները<br>Պիտանիության ժամկետը |

| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| 2002 | Տոմատներ՝ այդ թվում տոմատի մածուկ, պատրաստած կամ պահածոյացված, առանց քացախի կամ քացախաթթու ավելացնելու | Չոր նյութերի զանգվածային մասը՝ տոկոսով (տոմատի մածուկի համար)<br>Պահման պայմանները<br>Պիտանիության ժամկետը |
| 2003 | Սնկեր և գետնասնկեր՝ պատրաստած կամ պահածոյացված առանց քացախի կամ քացախաթթու ավելացնելու | |
| 2004 | Այլ բանջարեղեն՝ պատրաստած կամ պահածոյացված առանց քացախի կամ քացախաթթու ավելացնելու, սառեցրած, բացառությամբ 2006ապրանքային դիրքում դասակարգված մթերքների | Պահման պայմանները<br>Պիտանիության ժամկետը |
| 2005, բացառությամբ 2005 10 001 | Այլ բանջարեղեն պատրաստած կամ պահածոյացված, առանց քացախի կամ քացախաթթու ավելացնելու, չսառեցրած, բացառությամբ ապրանքային 2006 դիրքում դասակարգված մթերքների | |
| 2006 00 | Բանջարեղեն, պտուղներ (մրգեր), ընկույզներ, պտուղների կեղև կամ բույսերի այլ ուտելի մասեր՝ շաքարով պահածոյացված (շաքարի բանձրահյութով ներծծված, շաքարով կամ շաքարահյութով պատած) | |
| 2007, բացառությամբ 2007 10 101 2007 10 911 2007 10 991 | Մրգախյուսեր (ջեմեր), պտղային (մրգային) դոնդողակներ, մարմելադներ, պտղային (մրգային) կամ ընկուզային խյուս, պտղային (մրգային) կամ ընկուզային մածուկ, այդ թվում՝ շաքար կամ քաղցրացնող նյութեր ավելացրած՝ ջերմամշակման եղանակով ստացված | Շաքարի պարունակությունը<br>Պահման պայմանները<br>Պիտանիության ժամկետը |
| 2008 | Պտուղներ (մրգեր), ընկույզներ և բույսերի այլ ուտելի մասեր, այլ կերպ պատրաստած կամ պահածոյացված, այդ թվում՝ շաքար կամ քաղցրացնող նյութերի կամ սպիրտի հավելումներ պարունակող կամ չպարունակող, այլ տեղում չնշված | |

| 1 | 2 | 3 |
| --- | --- | --- |
| 2009 | Մրգահյութեր (ներառյալ խաղողահյութը) և բանջարեղենի հյութեր, չխմորված և սպիրտ չավելացրած, շաքար կամ այլ քաղցրացնող նյութեր ավելացրած կամ չավելացրած | Վիտամինների և հանքային նյութերի պարունակությունը<br>Շաքարի պարունակությունը (առկայության դեպքում)<br>Պահման պայմանները<br>Պիտանիության ժամկետը |
| 2101 | Սուրճի, թեյի կամ մատեի կամ պարագվայական թեյի խտահյութեր, բնահյութեր ու խտածոներ և պատրաստի մթերքներ դրանց հիմքով կամ սուրճի, թեյի կամ մատեի կամ պարագվայական թեյի հիմքով.<br>. բոված եղերդ և սուրճի այլ բոված փոխարինիչներ և դրանց խտահյութերը, բնահյութերը և խտածոները | Բույրի անվանումը, եթե թեյի և սուրճի մթերքի պատրաստման ժամանակ օգտագործվել են *բուրավետիչներ*<br>Բաղադրությունը (առկայության դեպքում)<br>Պահման պայմանները<br>Պիտանիության ժամկետը |
| 2102 | Խմորիչներ (ակտիվ կամ ոչ ակտիվ). –այլ մեռած միաբջիջ մանրէներ (բացառությամբ 3002 ապրանքային դիրքի պատվաստանյութերից). հացաթխման պատրաստի փոշիներ | Ցուցումներ օգտագործման վերաբերյալ (առկայության դեպքում)<br>Պահման պայմանները<br>Պիտանիության ժամկետը |
| 2103 | Մթերքներ սոուսներ պատրաստելու համար և պատրաստի սոուսներ. համային հավելումներ և խառը համեմունքներ.<br>մանանեխի փոշի և պատրաստի մանանեխ | Բաղադրությունը (առկայության դեպքում)<br>Ցուցումներ կերակրատեսակների պատրաստման համար (առկայության դեպքում) |
| 2104, բացառությամբ 2104 20 001 | Պատրաստի ապուրներ ու արգանակներ և նախապատրաստվածքներ դրանք պատրաստելու համար. համասեռված (հոմոգենացված) բաղադրամասային պատրաստի սննդամթերքներ | Պահման պայմանները<br>Պիտանիության ժամկետը |

| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| 2105 00 | Պաղպաղակ և սննդային սառույցի այլ տեսակներ, կակաո չպարունակող կամ պարունակող | Բաղադրությունը (առկայության դեպքում)<br>Պահման պայմանները<br>Պիտանիության ժամկետը |
| 2106 | Սննդամթերք այլ տեղում չնշված (այդ թվում սննդային հավելումներ) | Բաղադրությունը (առկայության դեպքում)<br>Ցուցումներ օգտագործման վերաբերյալ (առկայության դեպքում)<br>Պահման պայմանները<br>Պիտանիության ժամկետը |
| 2201 | Ջրեր, ներառյալ բնական և արհեստական հանքային ջրերը, գազավորված, առանց շաքարի կամ այլ քաղցրացնող կամ համային և բուրավետ նյութերի հավելումների, սառույց և ձյուն | Ջրի քիմիական բաղադրությունը՝ հանքային և արհեստական հանքայնացման ջրի համար<br>Ցուցումներ օգտագործման վերաբերյալ (հատուկ նշանակման ջրերի համար)<br>Տիպը (գազավորված, չգազավորված)<br>Ջրի աղբյուրի անվանումը և գտնվելու վայրը (հանքային ջրերի համար)<br>Ընդհանուր հանքայնացումը և կոշտությունը<br>Պահման պայմանները<br>Պիտանիության ժամկետը |
| 2202 | Ջրեր, ներառյալ հանքային և գազավորված ջրերը, շաքարի կամ այլ քաղցրացնող կամ բուրավետ նյութերի հավելումներով, և այլ ոչ ալկոհոլային խմիչքներ, բացառությամբ 2009 ապրանքային դիրքի մրգահյութերից ու բանջարեղենային հյութերից | Պահման պայմանները<br>Պիտանիության ժամկետը |

| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| 2203 00 | Գարեջուր ածիկային | Էթիլ սպիրտի ծավալային մասի արժեքը տոկոսներով<br>Նախնական քաղցուի լուծամզման ակտիվության չափը, տոկոսներով (բացառությամբ ոչ ալկոհոլային և համային ու բուրավետ հավելանյութերով հատուկ գարեջրի)<br>Պահման պայմանները<br>Պիտանիության ժամկետը |
| 2204 | Խաղողի գինիներ բնական, ներառյալ թնդեցվածները. խաղողի քաղցու, բացառությամբ 2009 ապրանքային դիրքում նշվածներից | Էթիլ սպիրտի ծավալային մասը<br>Շաքարի զանգվածային խտությունը՝ բացառությամբ անապակ (չոր) գինիների<br>Պահման պայմանները (տարայության դեպքում)<br>Պիտանիության ժամկետը այն ըմպելիքների համար, որոնցում էթիլ սպիրտի ծավալային մասը 9 %-ից պակաս է |
| 2205 | Վերմուտներ և խաղողի այլ բնական գինիներ՝ ավելացված բուսական կամ բուրավետ նյութեր | |
| 2206 00 | Խմորման ենթարկված այլ ըմպելիքներ (օրինակներ՝ խնձորի սիդր, պերրի կամ տանձի սիդր, մեղրաըմպելիք). խառնուրդներ խմորման ենթարկված ըմպելիքներից և խմորման ենթարկված ըմպելիքների և ոչ ալկոհոլային ըմպելիքների խառնուրդներ՝ այլ տեղում չնշված | |
| 2207 | Էթիլ սպիրտ չբնափոխված, 80 %-ից ավելի սպիրտի ծավալային մասով կամ էթիլ և այլ սպիրտներ, բնափոխված՝ ցանկացած խտության | Էթիլ սպիրտի ծավալային մասը<br>Շշալցման թվականը<br>Պիտանիության ժամկետը, որոնց էթիլային սպիրտի ծավալային մասը 10 %-ից պակաս է |
| 2208 | Էթիլ սպիրտ չբնափոխված, սպիրտի 80 %-ից պակաս ծավալային մասով. սպիրտային ըմպելիքներ.<br>լիկյորներ և այլ սպիրտային ըմպելիքներ | Հնեցման տարիքը կոնյակի համար<br>Շաքարի զանգվածային խտությունը (լիկյոր-օղու համար, եթե չափորը նախատեսված է բաղադրագրով)<br>Էթիլ սպիրտի ծավալային մասը<br>Շշալցման թվականը |

| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| 2209 00 | Քացախ և դրա փոխարինիչներ՝ ստացված քացախաթթվից | Քացախաթթվի խտությունը<br>Օգտագործման եղանակը (առկայության դեպքում) |
| 2501 00 91 | Աղ կերակրի | Կարգը<br>Աղացվածքը<br>Յոդացվածությունը՝ առկայության դեպքում<br>Պիտանիության ժամկետը (յոդացվածի դեպքում) |

Հավելված 2

## Մանկական սնունդ

| Ծածկագիրը ըստ ԱՏԳ ԱԱ դասակարգչի | Մթերքի անվանումը | Այլ հիմնական տեղեկատվությունը |
|---|---|---|
| 0402 29 110 | Հատուկ նշանակության կաթ՝ կրծքի երեխաների համար հերմետիկ փաթեթավորմամբ՝ 500 գ-ից ոչ ավելի մաքուր զանգվածով, զանգվածում 10%-ից ավելի յուղայնությամբ | Սննդային արժեքը<br>Վիտամինները և հանքային նյութերը<br>Բաղադրությունը<br>Պատրաստման եղանակը (անհրաժեշտության դեպքում)<br>Նշանակումը և օգտագործման պայմանները (անհրաժեշտության դեպքում)<br>Մայրական կաթի փոխարինիչների համար հայերեն տեղեկատվության տեքստում պետք է տրված լինի նաև տեղեկատվություն կրծքով կերակրելու առավելության և բժշկի կողմից կերակրելու սխեմա նշանակելու անհրաժեշտության մասին<br>Պահման պայմանները<br>Պիտանիության ժամկետը |
| 1602 10 001 | Մսից, մսային ենթամթերքից համասեռված պատրաստի սննդամթերքներ՝ մանկական սննդի համար | |
| 1901 10 000 | Ալյուրից, ձավարեղենից, օսլայից պատրաստված մանկական սնունդ՝ փաթեթավորված մանրածախ առևտրի համար | |
| 2005 10 001 | Բանջարեղենի պահածո (չսառեցրած, առանց քացախի)՝ մանկական սննդի համար | |
| 2007 10 101 | Ջեմ, մրգախյուս, մարմելադ պատրաստի՝ մանկական սննդի համար | |
| 2007 10 911 | Ջեմ, մրգախյուս, մարմելադ պատրաստի՝ տրոպիկական պտուղներից մանկական սննդի համար | |
| 2007 10 991 | Ջեմ, մրգախյուս, մարմելադ պատրաստի՝ այլ պտուղներից, մանկական սննդի համար | |
| 2104 20 001 | Պատրաստի սննդամթերքների համասեռված բաղադրամասեր՝ մանկական սննդի համար | |
| | Այլ մանկական սնունդ | |